ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII Դ. 50—60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

XVIII դ. 30—40-ական թվականների վրաց ժողովրդի համառ և հետևողական պայքարը Նադիր շահին հարկադրեց հիմնովին փոխել իր նախկին ծրագիրը Վրաստանի նկատմամբ և «ղզլբաշոբան» հետզհետե «քարթվելոբայով» փոխարինել[1]։ Տեղի տալով վրաց ժողովրդի համառ դիմադրությանը, Նադիր շահը մասնավորապես հարկադրված եղավ Քարթլիի թագավոր ճանաչել Թեյմուրազին, իսկ Հերակլին՝ Կախեթի թագավոր։ Պատմական այս կարևոր իրադարձությանը անդրադառնալով, Պապունա Օրբելիանին գրել է. «Քրոնիկոնի 432 թ. (1744) հուլիս ամսին Քարթլիին տիրելու լուրը հասավ Թեյմուրազ արքային, իսկ Կախեթին տիրելու լուրը՝ արքայազն Հերակլին. բերկրանք էին ապրում Քարթլին և Կախեթը, անսահման բերկրանք»[2]։

Վաստակաշատ պատմաբան Լեոն, ճիշտ գնահատելով պատմական այս իրադարձության նշանակությունը, գրել է. «Այս թվականը նոր էջ էր բաց անում վրաց պատմության մեջ և մեծ նշանակություն ունեցավ նաև հայ ժողովրդի համար»[3]։ Քարթլիի և Կախեթի թագավորությունների զորեղացումը օտարակալության լծից ազատագրվելու հույս էր ներշնչում նաև հայ ժողովրդին։ Նույնիսկ այն ժամանակ, «երբ Վրաստանը մեկ միասնական պետություն չէր և ինքը ևս օգնության կարիք ուներ, Քարթլ-Կախեթի քաղաքական շրջանները մշտապես ջանում էին օգնության ձեռք մեկնել եղբայրական հայ ժողովրդին, այդ էին պահանջում ոչ միայն հայ ժողովրդի, այլև վրաց ժողովրդի շահերը»[4],— գրում է վրաց հետազոտող Վ. Կոպալիանին։

Վրաստանի (Քարթլիի և Կախեթի) դերը առանձնապես ակնառու դարձավ Նադիր շահի սպանությունից հետո (1747)՝ ողջ Իրանում և Արևելյան Անդրկովկասում ծայր առած սոսկալի անիշխանության շրջանում։ Ստեղծված մղձավանջային իրադրության ճշմարտացի նկարագրությունը գտնում ենք Հովհաննես գրչի մոտ, որը սրտի կսկիծով նշում է հետևյալը. «...ի ժամանակս այս գոյր անպատմելի և անգրելի խռովութիւնք և մարտք։ Կարճառօտ այսքան իմասջիք, զի ի ներքանեաց ամացս ութն շահ փոխեցան մին զմիւսն սպանանելով և զտեղին յաջորդելով։ Մտածեա, թէ որքան իցէ լեալ վնասքն ի

[1] ნ. ბერძენიშვილი, საქართველოს ისტორიის საკითხები. ტ. II, თბილისი, 1965, էջ 182։ Վրացագիտության մեջ «ղզլբաշոբա» հասկացությունը նշանակում է ուժի միջոցներով բնակչության մահմեդականացում և երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական ազգային կարգը պարսկականով փոխարինում, իսկ «քարթվելոբան» նշանակում է երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրոնական ազգային՝ վրացական հարաբերությունների ու կարգի պահպանում։

[2] პაპუნა ორბელიანი, საქართველოს ცხოვრება, ქართლის ცხოვრება. სანკტ-პეტერბურგ, 1854, էջ 369։

[3] Լեո, Երկերի ժողովածու, հ. III, Երևան, 1973, էջ 275։

[3] Լեո, Երկերի ժողովածու, հ. III, Երևան, 1973, էջ 275։

[4] ვ. კოპალიანი, ამიერკავკასიის ხალხთა ურთიერთობის წარსულიდან, თბილისი, 1962 էջ 247։

հեծելազորաց սոցա և երկիրն ո՞րպէս իցէ ոտնակոխ լեալ հանդերձ դերեվարութեամբ, թող զսրամաչ և սովամահ լեալսն, իսկ փախստեայսն ո՞ թուեսցէ, գրեթէ երկիրն Պարսից և Արարատեան ամայի եղև[5]։ Վերը նշված քաղաքական հեղհեղուկ իրադրության առկայության պայմաններում Անդրկովկասում ամենից կորեղը Թեհմուրազ II-ի և Հերակլ II-ի գլխավորած Քարթլիի և Կախեթի թագավորություններն էին, որոնք ոչ միայն դինաստիական, այլև տնտեսական և քաղաքական շահերից ելնելով՝ միասնաբար էին հանդես գալիս և պայքարում վրաց պետականության առաջնությունը Անդրկովկասում հաստատելու համար։ Պայքարելով քաղաքական առաջնության համար, վրաց պետական գործիչները հստակ պատկերացնում էին գոնե Արևելյան Հայաստանի հայության հետ սերտ դաշնակցելու անհրաժեշտությունը և կարևորությունը։ Հարկ է նշել, որ Արևելյան Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի հայ ազգաբնակչությունն իր հերթին Քարթլի-Կախեթի հզորացման մեջ տեսնում էր իր ազատաբաղձ ձգտումների կենսագործման լուրջ երաշխիքը։ Շահերի նման համահնչունությամբ էր թելադրված XVIII դ. 50—60-ական թվականների հայ-վրացական համագործակցությունը։ Բերենք մեր սույն միտքը հավաստող կոնկրետ փաստեր։ 1749 թ. աշնանը Արարատյան աշխարհ ներխուժեցին թուրքմենական (թարաքամա) ցեղերը՝ Մահմադ խանի գլխավորությամբ։ Երևանի խանը օգնություն խնդրեց Թեհմուրազից և Հերակլից, պարտավորվելով վճարել ինչպես արշավանքի ծախսերը, այնպես էլ ամենամյա հարկ[6]։ Վրաց թագավորներն այս առաջարկությունն ընդունեցին և հայերի մասնակցությամբ արշավեցին Մահմադ խանի զորքի վրա։ Այս արշավանքն ավարտվեց վրաց զորքի և նրանց զինակից հայերի հաղթանակով։ Դրանով Երևանի խանությունը Քարթլի-Կախեթի հովանու տակ անցավ և նրա քաղաքական ընթացքի մասնակիցը դարձավ։ Այնուհետև Քարթլի-Կախեթի գերիշխանության տակ անցավ նաև Նախիջևանի խանությունը։ Ուշագրավ է, որ այդ ժամանակ Նախիջևանի խանն էր ազգությամբ վրացի Համան խանը, որը հովանավորում էր տեղի հայ ազգաբնակչությանը և օգտվում նրա աջակցությունից[7]։ Մահմադ խանի հրոսակները նեղել էին նաև Գանձակի բնակչությանը, ուստի և Երևանից հետո, 1750 թ. գարնանը, համաձայն սկզբնաղբյուրի վկայության, Թեհմուրազ արքան 12 հազարանոց զորքով Պարտավ բնակավայրում մարտի բռնվեց Մահմադ խանի զորքերի հետ և գլխովին ջախջախեց այս բախտախնդիր ասպատակիչի զորքերը[8]։ Եթե նկատի առնենք, որ մարտադաշտի շրջակայքի բնակչությունը հիմնականում հայկական էր, ապա դժվար չէ կռահել, թե այդ բնակչության համակրանքը, թերևս նաև աջակցությունը, ո՞ւմ կողմը կլիներ։

Նադիր շահի սպանությունից հետո Խորասանից վերադարձած և դաշտային Արցախում հաստատված Փանահ-Ալի խանն այդ ժամանակ առանձնապես ուժեղացել էր և նեղում էր Գանձակի և Նախիջևանի ազգաբնակչությանը։

---

[5] «Արարատ», Վաղարշապատ, 1868, № 2, էջ 156։

[6] პ. ორბელიანი, նշվ. աշխ., էջ 121, տե՛ս նաև „საქართველოს ისტორიის ნარკვევები", ტ. IV, თბილისი, 1973, էջ 614։

[7] Նույն, նշվ. աշխ., էջ 230—231։

[8] «Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века». Сборник документов, т. III, Ереван, 1978, էջ 247—248։

Արարատյան աշխարհի և Վրաստանի դեմ նորելուկ Փանահ խանի ոտնձգությունների մասին ժամանակակից մի վավերագրում, որի հեղինակը 1749 թ. դեկտեմբերին Բաքվից Ղզլար եկած ռուս հետախույզ Ս. Կիրյանն է, կարդում ենք հետևյալը. «Իմ Բաքու գալուց երկու շաբաթ առաջ Շամախուց այն կողմը չիանշիրյան Փանահ խանը, Գանձակի Շահվերդի խանը, Շաքիի Հաջի Չելեբին, Կապաղակի Աղամաղլին, Մուղանի Սաֆարալի խաներն ընդհանուր համաձայնության էին եկել, որպեսզի Վրաստանն ասպատակելու գան, ուստի և Փանահ խանը նախապես իր զորքը ժողովել, թվով մոտ չորս հազար, և իր որդու և եղբոր գլխավորությամբ ուղարկել էր դեպի Երևան ու հայոց վանքը, որ իրենք Ուչ Քիլիսա են կոչում, իսկ հենց որ տեղ են հասել, ապա Երևանի բնակիչներից և վանքից բաղում թվով անասուն ու գերիներ են բռնությամբ վերցրել, այդ իսկ պատճառով Երևանի բնակիչները դիմել են վրաց արքա Հերակլին և հայտնել եղելությունը, ուստի և այդ արքան, ժողովելով իր զորքը, հետապնդել է ասպատակիչներին, շատերին կոտորել, միայն,— ասում են,— այդ զորքից չնչին մասն է մազապուրծ եղել, ընդսմին սպանվել են նաև Փանահ խանի որդին ու եղբայրը...»[9]։ Արցախի հայ մելիքներին այդ նույն ժամանակ օգնելու և Փանահ խանի ոտնձգությունների դեմ նրանց սատար լինելու մասին է վկայում վրաց պատմիչ Պապուան Օրբելիանին, երբ գրում է. «Սղնաղի (Արցախի—Վ. Մ.) երկու մելիքներն էլ, որ այստեղ էին, խնդրում էին. «քրիստոնյա միապետ եք, դուք տիրեք մեզ, թուրքի ձեռքից մեկ ազատեք»։ Այս ընթացքում մի հայ եպիսկոպոս էլ եկավ, Փանահ խանը Սղնաղ էր ներխուժել, մեծապես նեղում էր, սա էլ որ խնդրեց, արքաները անսացին և զորքի պատրաստություն տեսան։ Այդ ժամանակ եկավ նաև Գանձակի խանի սուրհանդակը և հայտնեց, որ Փանահ խանը Գանձակի բերդը շրջապատել է, երկիրն ավերում է և բերդականներին նեղն է գցել։ Հրամայեցին Քարթլիի և Կախեթի արքաները զորքերին և շարժվեցին Գանձակը փրկելու»[10]։ Երբ վրաց զորքը մոտենում է Գանձակին, նրան ընդառաջ են ելնում Թամրազ մելիքը և Գանձասարի կաթողիկոսը, որոնք ընծաներ են մատուցում արքաներին և պարեն մատակարարում զորքին։ Ապա արքաները զորքով մտնում են Արցախի սահմանները, և ստանում հայերի աջակցությունը։ Փանահ խանը հարկադրված է լինում ճանաչել վրաց իշխանությունը։ Այնուհետև Հերակլին ու Թեհմուրազին իր հպատակությունն է հայտնում Բարգուշատի խանը։ «Ինչ խոսք, այս արշավանքը ավելի խորը պատճառներ ուներ, քան ակնկալվող նյութական շահերը։ Գանձակին տիրելու դեպքում Փանահ խանը, անշուշտ, ավելի կոմեղանար և կսպառնար Քարթլ-Կախեթին»[12],— իրավամբ գրում է Մ. Դումբաձեն։ Այդ վտանգը ճիշտ է կռահել նաև դեպքերին ժամանակակից վրաց պատմիչ Պ. Օրբելիանին, որը միանգամայն արդարացի կերպով նշում է, որ Փանահ խանը «եթե Գանձակին տիրի, այնուհետև Ղազախ-Բորչալուն կկամենա նվաճել»[13]։

Թեհմուրազի և Հերակլի զորահրամանատարությամբ գործող վրաց բանակի կազմում կային իմերեթացիներ, օսներ, Արարատյան աշխարհի և Գու-

---

9 Նույն տեղում, էջ 239։

10 Յ. Օրբելիանի, Նշվ. աշխ., էջ 423։

11 Նույն տեղում, էջ 426—427։

12 „საქართველოს ისტორიის ნარკვევები", ტ. IV, თბილისი, 1973, էջ 615։

13 Յ. Օրբելիանի, Նշվ. աշխ., էջ 420—421։

զարքի հայեր։ Բասակին միացել էին Գյուլիստանի մելիք Թամրազը, Գանձասարի կաթողիկոս Ներսեսը և Արցախի այլ մելիքներ իրենց զորքերով[14]։

Ղուկաս Կարնեցին զոհունակությամբ նշելով վրաց արքաների հաջողությունը, գրել է. «Տիրապետեաց յայնժամ ի Վրաստան Հերակլ որդի Թամրազայ, ետ պատերազմ ընդ դեկս, յաղթեաց նոցա, տիրեաց Քարթլոյ և Կախեթու, նուաճեաց ընդ իւրով իշխանութեամբ զիշխեցողս Բորչալուի, Ղազախայ, Երևանայ, Գանձակայ, Արցախայ և Սիւնեաց, և թագ կապեալ թագաւորեաց ի վերայ վրաց և մասին հայոց ցԱխուրեան գետ»[15]։

Լեոն յուրովի է գնահատում Փանահ խանի դեմ Քարթլ-Կախեթի արքաների հաղթանակը։ Նա կշտամբում է Թեհմուրազին, որ վերջինս այս հաղթանակը իր ավարտին չհասցրեց, չվերացրեց Ղարաբաղի խանությունը և պատշաճ օգնություն ցույց չտվեց Արցախի հայ մելիքներին։ «Բարգուշատի հաշտության պայմանների մեջ ոչինչ չկար հօգուտ հայ ազգային իշխանության»[16],— գրում է Լեոն։ Սակայն, համոզիչ կերպով առարկելով Լեոյին, Մ. Դումբաձեն գրում է. «դժվար է համաձայնել այս դատողության հետ։ Մի բան է խանի դեմ ռազմի դաշտում հաղթանակ տանելը, այլ բան բուն խանության ոչնչացումը. այս վերջին պարագան ավելի բարդ խնդիր է և անհամեմատ ավելի մեծ հնարավորություն, կենդանի ուժ և նյութական միջոցներ է պահանջում։ Բնատնտեսության վրա խարսխված թագավորությունը չէր կարող այդքան հեռուն գնալ, որ հպատակեցված երկրների ֆեոդալական իշխանությունները վերացներ և անմիջականորեն իր տիրույթներին միացներ»[17]։

Բարգուշատի հաղթանակը, որ ձեռք էր բերվել վրաց-հայկական դինակցությամբ, թեև Արցախի մելիքներին ակնկալվող արդյունքներ չտվեց, բայց արևելահայության համար ընդհանուր առմամբ դրական նշանակություն ունեցավ, քանի որ պարտություն կրելով, Փանահ խանը Անդրկովկասում առաջնություն ունենալու հավակնություններից հրաժարվեց, և նրան չհաջողվեց Արևելյան Հայաստանի այլ հողերի հաշվին ընդարձակելու իր իշխանությունը։ Այս իրողությունն արդեն ինքնին հույժ կարևոր էր։

Արարատյան աշխարհի բնակչությունը վրաց զորական բարեբար օգնության շնորհիվ 1751 թ. ազատվեց մի այլ բախտախնդրի իշխանությանը ենթարկվելու վտանգից ևս։ Խոսքը վերաբերում է աֆղան Ազատ խանին, որը շահի գահի հավակնորդներից էր և կամենում էր իր գերիշխանությունը Արարատյան աշխարհի վրա հաստատելով էլ ավելի մեծ հաջողությամբ շարունակել գահակալական պայքարը։ Եթե Ազատ խանն իր իշխանությունը հաստատեր Արարատյան աշխարհի վրա, ապա դրանով իսկ սպառնալիք կստեղծեր Քարթլ-Կախեթի անկախության համար, որովհետև զորեղացած Ազատ խանը ամենևին էլ չէր հանդուրժի Քարթլիի և Կախեթի անկախությունը։ Ազատ խանի գլխավորությամբ Արարատյան աշխարհ ներխուժած 18 հազարանոց զորաբանակը նոր արհավիրքներ էր բերում տեղի ազգաբնակչությանը։ 1751 թ. հուլիսին Ղրիբուլաղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Հերակլ արքան, շնորհիվ իր ռազմական տաղանդի և վրաց զորքի բարձր մարտունակության,

14 Նույն տեղում, էջ 424։

15 «Դիվան հայոց պատմության», գիրք, Դ. Թիֆլիս, 1899, էջ 728—729, տե՛ս նաև «Армяно-русские отношения...», т. III, էջ 245։

16 Լ ե ո, նշվ. աշխ., էջ 277։

17 „საქართველოს ისტორიის ნარკვევები“, ტ. IV, თბილისი, 1973, էջ 617։

փոքրաքանակ զորքով ծանր պարտության մատնեց ասպատակիչների թվով գերազանցող ուժերին։

Ագաթ խանի դեմ տարած հաղթանակի և վրաց զորքի Արարատյան աշխարհի բնակչությանը ցույց տված օգնության առթիվ Հակոբ Շամախեցին Տփղիսի մելիք Ագա Բեհբուդյանին գրել է հետևյալ ուշագրավ տողերը. «Յիրաւի Ճշմարիտ բարեկամի բարեկամութիւն և սէրն յասպիսում ժամանակում պիտի երևիլ, որպէս ապա թէ ձերն և թէ մանաւանդ յաստուծոյ օրհնեցեալ արքային, որ որպէս թէ ի խորոյ տրտմութեան գրոյ ձեռն ձգեալ հանել ջանայ զմեզ ի վեր, զորմէ շնորհակալ եմք միշտ և աղօթող վասն կենաց և բարեհաջողութեան»[18]։

Պարտված Ագաթ խանը Հերակլ արքային խոստացավ այլևս Արաքս գետը չանցնել։

Հայ-վրացական համագործակցության և վրացական զորական ուժի՝ հայ ազգաբնակչությանը ցույց տված օգնության ուշագրավ փաստերի ենք հանդիպում նաև XVIII դ. 50—60-ական թվականներին ավարառության և գերեվարության նպատակով կովկասյան լեռնական ֆեոդալների ձեռնարկած ասպատակությունները կանխելու, նրանց հարձակումներին դիմակայելու խնդրում։ Այսպես, 1760 թ. Թելմուրազ արքային Պետերբուրգ ուղեկցող գնդապետ Կոպիտովսկին հաղորդում է, որ «Հերակլը շատ տավլենցիներ է կոտորել, քանի որ այդ տավլենցիները գնացել էին Երևանի կողմը և այնտեղ ոչ նվազ քանակով հարստություն էին հափշտակել, ինչպես նաև բազում գերիներ վերցրել...»[19]։

Նկարագրելով նշված ժամանակաշրջանում ստեղծված իրավիճակը, 1766 թ. հոկտեմբերին Սիմեոն Երևանցին գրում է. «...քանզի բաց ի հանապազորդական վշտակրութեանց մերոց, զորս ունիմք յամենուստ կուսէ, թէ ի յանտիրութենէ երկրիս, թէ ի խստութենէ և յագահութենէ տիրողաց և թէ յայլ այսպիսեաց, ժամանին մեզ ևս երբեմնականք վիշտք, որք առաուել լինին մեզ մաշիչք կենաց և տան զմոռացումն մշտականացն։ Որոց առաւելապոյն և մեծագոյնն է ասպատակն... լեկզեաց, որք երբեմնապէս եկեալք՝ զբազում վնաս հասուցին մերոց շրջակայից և որոց մահաբեր երկիւղն ոչ սակաւ տոչորեաց զերկիրս մեր և զմեզ»[20]։

XVIII դ. 50—60-ական թվականներին տարբեր ասպատակիչների դեմ տարած հաղթանակներն ավելի ամրապնդեցին Քարթլ-Կախեթի հեղինակությունը։ Հզորացման ուղիով ընթացող արևելավրացական պետությունը որոշակի հույսեր էր ներշնչում նաև արևմտահայությանը։ Արխիվային մի վավերագիր համոզիչ կերպով վկայում է, որ թուրքական բռնատիրության ներքո հեծող հայ ազգաբնակչությունը բերկրանքով էր ընկալում Քարթլ-Կախեթի հաջողությունների մասին լուրերը։ «Հայերը,— կարդում ենք այդ վավերագրում,— լսելով, որ Հերակլն իրենց պատրիարքին ամենայն պատվով է ընդունել և որ վրացիներին համահավասար պաշտպանում, պահպանում է իրենց՝ հայերին, որոնք կազմում են նրա (Հերակլի—Վ. Մ.) զորքի գրեթե կեսը, հպարտանում են, որ իրենց դավանակիցները (հայերը—Վ. Մ.) ուրիշնե-

18 Մատենադարան, ձեռ. № 2911, թ. 64։
19 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՎ, գ. 1, մասն II, թ. 266բ։
20 Մատենադարան, ձեռ. № 2912, թ. 151ա։

րից պակաս քաջ մարտիկներ չեն և որ շնորհիվ դրա ստրկության լծից, որի ներքո են գտնվում արդեն մի քանի հարյուր տարի, կձերբազատվեն...»[21]։

Որքան էլ մեծ լինեին հաջողությունները ասպատակիչների դեմ մղված պայքարում, այդուհանդերձ, չէր հաջողվում մեկընդմիշտ վերջ դնել այդ ասպատակություններին, որոնք երկիրը մարդաթափ էին անում։ Այդ պայքարում վճռական հաջողության հասնելու համար անհրաժեշտ էր ստեղծել և պահել մշտական բանակ, որը, անշուշտ, կապված էր մեծամեծ ծախսերի հետ, ուստի և վրաց պետական գործիչները որոշեցին դիմել ռուսական կառավարությանը, հայցելով զորական և ֆինանսական օգնություն։ Թեհմուրազ արքայի գլխավորած դեսպանությունը այդ և այլ նպատակներով, որոնց վրա ծանրանալը մեր խնդրից դուրս է, 1760 թ. ուղևորվում է Պետերբուրգ[22]։ Թեհմուրազ II-ի առաքելության հետ որոշակի հույսեր էին կապում նաև հայերը։ Այդ է վկայում ոչ միայն տփղիսաբնակ հայերի գործուն մասնակցությունը բուն դեսպանության կազմում[23], այլև այդ առթիվ Հակոբ Շամախեցու գրած, թեկուզև չառաքված ուղերձը[24]։ Թե ինչպիսին էին Հ. Շամախեցու ակնկալությունները Թեհմուրազ արքայի դեսպանությունից, երևում է այն նամակագրությունից, որ ուներ նա Հերակլ II-ի հետ։ Այսպես, իր նամակներից մեկում նա գրում է. «Արդարև զցայգ և զցերեկ հոգամք և վարանիմք վասն ըստ մարմնոյ հոր քոյ, թէ արդեօք ո՞րպէս յաջողեցան նմա սակս բարի խորհրդոյն նորա, զի ցայժմ ոչ ծանուցեր մեզ։ Նորին աղագաւ միշտ սղօթեմք միաբանութեամբ... զի յաջողեսցէ նմա Տէր ի բարիս և զխորհուրդս և զկամս նորա կատարեսցէ խաղաղութեամբ և ուրախութեամբ հասուսցէ այդր առ քեզ և առ մեզ, որ զքեզ և զմեզ ուրախացուսցէ կատարելապէս»[25]։

Բերված քաղվածքը համոզիչ վկայում է, որ հայ հեղեղեցական-հասարակական գործիչն ուշի-ուշով հետևում էր ռուս-վրացական բանակցություններին և մեծապես շահագրգռված էր, որպեսզի դրանք ցանկալի արդյունք տան, ակնկալելով, անուղղակույս, դրական հետևանքներ նաև հայության համար։

XVIII դ. 60-ական թվականների հայ-վրացական առնչությունների պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Հովսեփ Էմինի փոխհարաբերությունների հարցը Հերակլ արքայի հետ։

Հ. Էմինի ինքնակենսագրությունից պարզվում է, որ Պետերբուրգում կանգներ Մ. Վորոնցովը նրան ներկայացրել է Թեհմուրազ արքային և երաշ-

---

[21] Գ. Պաղլավա, Քართլիսա და კახეთის სამეფოების პოლიტიკური ურთიერთობა რუსეთთან XVIII ს-ის 50—60-იან წლებში, ქალთული სამეფო-სამთავრობის საგარეო პოლიტიკის ისტორიიდან, II, თბილისი, 1973, էջ 73։

[22] Թեհմուրազ II-ի առաքելության մասին հանգամանորեն տե՛ս Ս. Ցոնցաձե, Რუსეთ-საქართველოს ურთიერთობის ისტორიიდან. ქართლ-კახეთის სამეფოს ელჩობა რუსეთში, „საისტორიო მოამბე", ტ. XVII—XVIII, თბილისი, 1964, ինչպես նաև Ვ. Მაჭარაძე. მასალები XVIII საუკუნის მეორე ნახევრის რუსეთ-საქართველოს ურთიერთობის ისტორიისათვის, თბილისი, 1968, ნაწილი, II.

[23] Վ. Մ. Մարտիրոսյան, Հայերի առևտրական գործունեությունը Քարթլ-Կախեթի թագավորությունում (XVIII դ. երկրորդ կես). (ԼՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 11, էջ 68—69)։

[24] Ս. Տեր-Ավետիսյան, Նադիր շահի արշավանքները, Երևան, 1940, էջ 51—53, տե՛ս նաև А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945, էջ 74—75։

[25] А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 75։

խավորել, որ Հ. Էմինը պիտանի կլինի վրաց արքաների ծրագրերը կենսագործելու խնդրում։ Հ. Էմինը վկայում է, որ կանցլերի մոտ ճաշկերույթից հետո արքան նրան «հրավիրում է իր տուն, որտեղ երկու ժամ տևած զրույցի ժամանակ Թեհմուրազը ամեն կերպ բացատրում էր իրեն, հույս հայտնելով, որ իրենք կարող կլինեն պաշտպանել իրենց երկիրը թշնամիների ներխուժումից և որ հայերը կմիավորվեն վրացիների հետ, որպեսզի վերջնականապես թոթափեն օտարակալության լուծը»[26]։

Սակայն վրաց և հայ գործիչների նվիրական բաղձանքներին տակավին վիճակված չէր իրականանալ, քանի որ այդ ժամանակաշրջանում ռուսական կառավարության արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրը պրուսական զավթողական նկրտումներին դիմագրավելը և արևմուտքից ռուսական սահմաններին սպառնացող վտանգը վերացնելն էր։ Ահա թե այդ առթիվ ինչ որոշում է ընդունել 1756 թ. մարտի կեսերին արքունիքում կայացած խորհրդակցությունը. «...պրուսական թագավորին թույլ չտալ նոր հոշակ ձեռք բերելու, այլ նրա ուժերը չափավոր սահմանների հասցնել և, մի խոսքով, նրան անվտանգ դարձնել այստեղի (Ռուսաստանի—Վ. Մ.) կայսրության համար»[27]։

Ռուսական կառավարության արտաքին քաղաքականության հիմնական խնդիրն ուշադրության կենտրոնում ունենալու դեպքում հասկանալի է դառնում ոչ միայն Թեհմուրազ արքայի պատվիրակության՝ ակնկալվող արդյունքներին չհասնելը, այլև Հ. Էմինի նկատմամբ Հերակլ արքայի և կաթողիկոս Ս. Երևանցու դրված դիրքը, քանի որ, ինչպես արդեն վերը նշվեց, էջմիածնում հետևում էին Թեհմուրազ արքայի բանագնացությանը և երբ պատվիրակությունը ձեռնունայն վերադարձավ, ապա և՛ Հերակլի, և՛ Ս. Երևանցու համար պարզ դարձավ, որ մոտ ապագայում Ռուսաստանից զորական որևէ օգնություն ստանալը բացառվում է, որովհետև ռուսական արտաքին քաղաքականության կիզակետում գտնվում էր պրուսական զավթողական միտումների դսպումը. «...50-ական թվականներին, ինչպես և նախորդ տասնամյակում, ռուսական կառավարության ուշադրության կենտրոնում էր գտնվում Պրուսիան, որը շարունակում էր իր զավթողական քաղաքականությունը Եվրոպայի արևելքում։ Ռուսաստանը դառնում է հակապրուսական կոալիցիայի գործուն մասնակիցը։ XVIII դարի 50-ական թվականներին և 60-ականի սկզբին ռուսական կառավարությունը նախապատրաստվում էր Պրուսիայի դեմ առաջիկա պատերազմին»[28]։

Այս կարևոր խնդիրն էր, որ հարկադրում էր ռուսական կառավարությունը՝ ձեռնպահ մնալ Անդրկովկասի և Պարսկաստանի գործերին նոանդուն միջամուխ լինելուց, և Թուրքիայի նկատմամբ շրջահայաց քաղաքականություն վարել։ Ռուսական կառավարության XVIII դ. կեսերին վարած արտաքին քաղաքականության հստակ ընկալումը սերտորեն աղերսվում է Հ. Էմինի և Հերակլ արքայի փոխհարաբերությունները ճիշտ պատկերացնելու և այդ հարաբերությունների ընթացքը փաստարկված մեկնաբանելու հետ։

---

26 Նույն տեղում, էջ 88։

27 «Семилетняя война», сборник документов и материалов, М., 1948, էջ 25, տես նաև «История СССР», т. III, М., 1967, էջ 504։

28 «История СССР», т. III, М., 1967, էջ 501։

XVIII դ. 50—60-ական թվականների հայ ազատագրական մտքի թարգմանը եղավ Հ. Էմինը, որին վիճակվել էր ծանր զրկանքների և գոյության համար դաժան մաքառումների գնով ծանոթանալ եվրոպական բուրժուական լուսավորական գաղափարներին և այդ գաղափարների ոգով մշակել հայ ազգային-ազատագրական պայքարի ծրագիրը, մի ծրագիր, որը համանուն կետեր ունի Ի. Օրու՝ Պետրոս I-ին ներկայացրած ծրագրի հետ։ Հ. Էմինի ազատագրական ծրագրի հիմնական գաղափարը վրաց Բագրատունիների գլխավորությամբ հայ-վրացական պետության ստեղծումն էր։ Այդ միացյալ միապետության վրա պիտի տարածվեր Ռուսաստանի հովանավորությունը՝ որպես երկու բախտակից ժողովուրդների անվտանգության անհրաժեշտ երաշխիք[29]։ Արդ հարց է ծագում. Հերակլ II-ը ի վիճակի՞ էր արդյոք ընդունել և առավել ևս անմիջապես ձեռնամուխ լինել Հայաստանն ազատագրելու Հ. Էմինի ծրագրին։ Այս հարցին ակադ. Ա. Հովհաննիսյանը տալիս է բացասական պատասխան[30]։ Հերակլ II-ը իր գործունեության ընթացքում ձգտում էր Վրաստանի (և ոչ միայն Քարթլ-Կախեթի) վերականգնմանը և վերածնությանը, իսկ այս նշանակում էր, որ նա իր նպատակները կենսագործելիս անխուսափելիորեն բախվելու էր ոչ միայն Իրանի, այլև Թուրքիայի համառ դիմադրությանը, հետևաբար, նկատի առնելով այս հեռանկարը, Հերակլ II-ը պիտի ապագա գոտեմարտի նախապատրաստվեր և, ինչ խոսք, իր իսկ խնդիրները լուծելու միտումով դաշնակիցներ որոներ Թուրքիայի և Իրանի դեմ։ Ուրեմն, այս տեսակետից Հերակլ արքան պիտի դաշնակցեր հայերի հետ։ Սա նշանակում է, որ Հայաստանն ազատագրելու Հ. Էմինի ծրագիրը համանուն էր Թուրքիայի կողմից զավթած վրացական հողերն ազատագրելու Հերակլյան միտումներին։ Այս հանգամանքները պարտադիր անհրաժեշտություն էին դարձնում հայ-վրացական զինակցությունը։ Ինչ վերաբերում է ռուսական տերության հովանավորությունը ապագա հայ-վրացական պետության վրա տարածելուն, ապա Հ. Էմինի ծրագրի այս մասը ևս Հերակլի համար ընդունելի պիտի լիներ, քանի որ և՛ Թեհմուրազ II-ը, և՛ Հերակլ II-ը ինչպես այդ, այնպես էլ նախորդ շրջանում միտում էին Ռուսաստանի հովանավորությամբ կենսագործել Վրաստանը միավորելու իրենց ծրագրերը։ Սակայն մի բան է համաձայնել, ընդունելի համարել Հ. Էմինի քաղաքական ծրագիրը, այլ բան՝ ձեռնամուխ լինել նրա կենսագործմանը։ Եթե նկատի առնենք այն պարագան, որ Թեհմուրազ արքայի գլխավորած պատվիրակությունը ձեռնունայն վերադարձավ Պետերբուրգից, ապա հասկանալի կդառնա Հերակլ արքայի վարքագիծը Հ. Էմինի անձի և գործի նկատմամբ Հերակլ II-ը, իրոք, Ռուսաստանից ռազմաքաղաքական օգնության բացակայության պայմաններում չէր կարող հրապուրվել Հ. Էմինի ծրագրով։ Նա հստակ պատկերացնում էր, որ չափազանց անհավասար պիտի լիներ ուժերի փոխհարաբերությունն առաջարկվող գոտեմարտում՝ ի վնաս հայ-վրաց զինակցության։ Թուրքիան որքան էլ ուժասպառ լիներ, ի վիճակի էր այնքան զորական ուժ հակադրել հայ-վրացական կողմին, որքան ողջ Քարթլ-Կախեթի չափահաս ազգաբնակչությունն էր ուստի և Հերակլ II-ը սթափորեն պիտի կշռադատեր Հ. Էմինի առաջարկը՝

---

29 Л. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 103։

30 Նույն տեղում, էջ 131։

Թուրքիայի դեմ ռազմական գործողություններ սկսելը, և ըստ այդմ գնահատեր ակնկալվող հեռանկարները։ Այս է, մեր կարծիքով, պատճառներից գլխավորը, որ դրդեց Հերակլին՝ ձեռնպահ մնալ Հ. Էմինի առաջարկն ընդունելուց և հետագայում իր սակավազոր տերությունը մահացու վտանգից զերծ պահելու միտումով Հ. Էմինին առաջարկել հեռանալ Վրաստանից։

Հ. Էմինի նկատմամբ Ս. Երևանցու ցուցաբերած բացասական վերաբերմունքի պատճառը ևս այստեղ պիտի որոնել։ Կարծել, թե Ս. Երևանցին, ժամանակի այդ ականավոր եկեղեցական ու ազգային գործիչը, դեմ էր հայ ժողովրդի ազատագրությանը և ռուսական կողմնորոշմանը, կնշանակի մեղանչել պատմական ճշմարտության առջև։

Ս. Երևանցին պետականությունը վաղուց կորցրած մի ժողովրդի եկեղեցու գլուխն էր, կաթողիկոսը, միակ համազգային հաստատության ղեկավարը, հաստատություն, որին իրերի բերումով անցել էին նաև պետականության որոշ ֆունկցիաներ, այդ թվում օտար իշխողներին ողջ ժողովուրդը ներկայացնելու պատասխանատվությունը։ Ս. Երևանցին քաջատեղյակ էր, գիտեր ու տեսնում էր հայ ժողովրդի անմխիթար վիճակը Թուրք-պարսկական բռնատիրության ներքո, սակայն այդ վիճակից ելքը նա տեսնում էր Ռուսաստանի զորական աջակցության մեջ[31]։ Ս. Երևանցին այն խորին համոզմանն էր, որ «հայերի յուրաքանչյուր ինքնուրույն ելույթ այնպիսի խոշոր տերությունների դեմ, որպիսիք էին Իրանը և Թուրքիան, կլիներ անպատասխանատու արկածախնդրություն և կարող էր հանգեցնել ազգի կործանմանը[32], հրապարակում է Ա. Հովհաննիսյանը։

Մեր կարծիքով Հ. Էմինի ազատագրական ծրագրի ձախողման մեղքը բարդել Ս. Երևանցու վրա, ըստ էության, նշանակում է թերագնահատել օտարակալության լծից հայ և վրաց ժողովուրդների ձերբազատվելու խնդրում Ռուսաստանի վճռական դերը, միաժամանակ իմաստազուրկ դարձնելով հայ և վրաց ժողովուրդների ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը։ Մի բան, համենայն դեպս, պիտք է պարզ ու որոշակի լինի ուսումնասիրողի համար, այն է՝ ի վիճակի՞ էին արդյոք հայ-վրացական ուժերը, առանց Ռուսաստանի ռազմաքաղաքական օգնության, թոթափել թուրք-պարսկական լուծը և հետագայում դիմակայել այդ երկու խոշոր տերությունների ռազմակալման միտումներին։ Եթե ի վիճակի էին այդ խրթին և բազում բարդությունների հետ աղերսվող խնդիրը սեփական ուժերով լուծել, ապա հայ-վրացական քաղաքական գործիչները, իրոք, լուրջ վրիպում են թույլ տվել, որ ըստ ամենայնի չեն ընդառաջել Հ. Էմինի ծրագրին, և այդ դեպքում միայն իրավունք կունենանք անարգանքի սյունին գամելու հայոց կաթողիկոս Ս. Երևանցուն։ Սակայն մի կողմից հայ-վրացական, մյուս կողմից թուրքական և պարսկական ուժերի սթափ համադրումը հարկադրում է միանգամայն բացասական պատասխան տալ վերը դրված հարցին։

Ս. Երևանցին իր համոզմունքը, անտարակույս, խարսխում էր նաև նույն XVIII դ. 20-ական թվականներին ծավալված ազատագրական պայքարի փորձի սթափ վերլուծության վրա, երբ Ռուսաստանի զորական օգնության բացակայությունը փաստորեն ի դերև հանեց հայ և վրաց ժողովուրդների

31 Նույն տեղում, էջ 172։
32 Նույն տեղում, էջ 172—173։

ազատագրական ոգորումները։ Ելնելով այս ամենից, իհարկե, Հերակլ II-ը և Ս. Երևանցին պիտի որ գգույշ և շրջահայաց վերաբերմունք ունենային Հ. Էմինի ծրագրի նկատմամբ։ Հերակլ II-ին Ս. Երևանցու գրած նամակի ստորև բերվող տողերը հավաստում է մեր կարծիքը. «Խնդրեմ, զի լաւապէս մտածեալ որոշայցես, և մանաւանդ զդա (Հ. Էմինին—Վ. Մ.) ևս զգաստացուսցես, զի զգիրն և զմարդիկս իւր յինքն ժողովեսցէ և խոհեմութեամբ շարժիցէ, զի երկիրս այլազգոյ ձեռաց է և մեք ի ձեռս սոցա կամք։ Գիտես զինչ ասեմ, ոչ միայն այս երկիր, այլև և յամենայն տեղիս, ուր գտանին ազգ մեր, քանզի մեծ ցաւ ծնանի վերջապէս ազգիս մերոյ որպէս երևի...»[33]։

Անշուշտ, Ս. Երևանցու վերը բերած տողերն են նաև հիմք տվել գրականագետ Պ. Հակոբյանին՝ հանգելու ստորև բերվող միանգամայն արդարացի դատողությանը. «Հայության անմարելի բաղձանքն ու քաղաքական կողմնորոշումը պարտադրում էր այս հեռատես բանաստեղծ-քաղաքագետին ու հոգևոր գործչին՝ բանականության հունի մեջ ամփոփել ազգի ազատագրական ոգորումները և հրահանգել եկեղեցու սպասավորներին՝ հանդիսավոր արարողությունների ժամանակ երգել իր իսկ հորինած շարականը Ռուսաստանի հզորության և հարատևության մասին»[34]։

Ինքնին հասկանալի է, որ Ս. Երևանցու և համայն հայության մաղթանքը Ռուսիայի հզորության առթիվ ինքնանպատակ չէր. այդ երկրի հետ էր Ս. Երևանցին կապում օտար բռնակալների լծից հարազատ ժողովրդի և հայրենի երկրի փրկության իրական հույսը։

Նշված իրողությունների լույսի ներքո միանգամայն անհամոզիչ և անտեղի են այն մեղադրանքները, որ որոշ հեղինակներ հարուցել են Ս. Երևանցու հասցեին՝ Հ. Էմինի ծրագիրը չիրականանալու առիթով։ Նման մեղադրանքները արդյունք են պատմական կոնկրետ իրականության թյուրըմբռնման կամ անտեսման։ Վերջերս այդ մեղադրանքներին կենդանություն է տվել Բ. Ուլուբարյանը[35]։ Առանց որևէ լուրջ հիմնավորման նա հայտարարում է. «Ամենայն հայոց կաթողիկոսը, անհեռանկար ու վտանգավոր նախաձեռնություն համարելով ազատագրական պայքարի ամեն մի դրսևորում, ոչ միայն չէր ուզում, որ «իր հոտը» որևէ ձևով մասնակից դառնա անհեռանկար ու վտանգավոր պայքարի, այլև ցանկանում էր, որ իր մահմեդական տերերը համոզված լինեն, թե այդպիսի պայքարի փորձ է եղել, և ինքը հասցրել է արժանի հակահարված տալ»[36]։ Ծանր այս մեղադրանքը, հիմքում չունենալով պատմական որևէ փաստ, չի դիմանում քննադատության։

Ամփոփելով մեր ասելիքը, նշենք, որ XVIII դ. 50—60-ական թվականներին Քարթլ-Կախեթի թագավորության քաղաքական ամրապնդումը իր դրական նշանակությունն ունեցավ նաև հայ ժողովրդի համար։ Վրացի և հայ գործիչները նշված ժամանակահատվածում ձեռնամուխ էին եղել այն խնդիրների լուծմանը, որ իրենք, իրոք, ի վիճակի էին լուծել, մերժելով իրենց ուժերից վեր խնդիրները՝ որքան էլ դրանք առերևույթ հրապուրիչ լինեին։

---

33 Նույն տեղում, էջ 169. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 6, էջ 8—9.

34 «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ», բնագրերի պատրաստումը, ներածությունը և ծանոթագրությունները Պ. Հ. Հակոբյանի, Երևան, 1979, էջ թ։

35 Բագրատ Ուլուբարյան, Ոսկե շղթա, Երևան, 1979, էջ 210—216։

36 Նույն տեղում, էջ 211։

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ ВЗАИМООТНОШЕНИЯ В 50—60-х ГОДАХ XVIII в.

ВАГРАМ МАРТИРОСЯН

Резюме

Стойкая и последовательная борьба грузинского народа вынудила Надир шаха отказаться от политики ассимиляции грузинского народа. Благодаря этой борьбе грузинский народ сохранил свою государственность в Восточной Грузии—в Кахети и Картли. Это обстоятельство имело важное значение не только для грузинского, но и для армянского народа.

В укреплении и усилении Картл-Кахетинского царства армяне видели одну из серьезных предпосылок успеха в борьбе против персидско-турецких поработителей. Исторические факты наглядно показывают положительное значение усиления царств Картли и Кахети в судьбах Восточной Армении.

В армяно-грузинских связях указанного периода особое место занимает вопрос об отношении Ираклия II к Иосифу Эмину, видному представителю армянского освободительного движения. Оно диктовалось объективным положением Картл-Кахетинского царства и политикой России в отношении Закавказья и соседних с ним стран. Именно с внешней политикой России данного периода связана та позиция, которую заняли Ираклий II и католикос Симеон Ереванци в отношении освободительной программы Иосифа Эмина.